

Վնասակար են արգյոք հնուստատե-  
սային հաղորդումները առողջության հա-  
մար, չեն հոգեկցում զրանք աչքերը:  
Հնուստատեսության հետ կապված նման  
և բազմաթիվ այլ հարցեր բնավ եղակի  
չեն: Սակայն սկզբից եեթ ասենք, որ  
միանգամայն անհիմն են այն խոսակցու-  
թյունները, թե իբր կատողային խոզու-  
վակում (կինեսկոպում) առաջացող ճա-  
ռագայթները վնասակար ազդեցություն են  
ունենում օրգանիզմի վրա: Հաշվարկները և  
հետազոտությունները ցույց են տալիս, որ  
կինեսկոպից կենդ օճեղազենյան ճառա-  
գայթների քանակը պարզապես աննշան  
է: Բայց, երբ չեն պահպանվում ամենա-  
անհրաժեշտ կանոնները, երբ մարդ զիշեք  
ու ցերեկ նստում է հնուստացույցի մոտ,  
զա կարող է վնաս պատճառել առողջու-  
թյանը:

Հնուստացույցով շափից ավելի տար-  
վելը հազվագեղ երևույթ չէ: Եվ ահա այլ  
մարդականցից լսում ես՝ զերհոգեածու-  
թյուն ունեն, ներվային սխտեմա քայքայ-  
վել է, կարճատես եմ դարձել: Իսկ ի՞նչ  
կա այտանդ զարմանալու:

Ընդհանրապես ցանկալի չէ ավելորդ  
տեղադրություններով ծանրարեռնել ու-  
ղեղը (զա վերարբվում է հատկապես  
չամբացած մանկական օրգանիզմին): Ա-  
հա այդ պատճառով էլ շարժն հնուստա-

# ՊԱՆԱԾՈՒ ԱՐԵՎ


Ամեն վայրկյան երկիրն արևից այնքան էներգիա է ստանում, որքան կա-  
շատվեր երեք միլիոն տոննա բենզին այրվելիս: Վաղուց ի վեր մարդը երազել է  
օգտագործել այդ էներգիան: Հին հույներից մեզ մի գեղեցիկ լեզենդ է հասել հայ  
Պրոմեթեոսի մասին, որը երկնքում կրակ է հափշտակել և բերել այն մարդկանց:  
Իսկ հնարավոր չէ՝ արգյոք Պրոմեթեոսի նման հափշտակել արևի շերմությունն ու  
կոնսերվացնել այն, իսկ ամիսներ անց, երբ հարկ լինի, օգտագործել այդ էն-  
գիան:

Այս կարևոր հարցի լուծումը ինքը՝ բնությունն է հուշում: Հազարամյակներ  
շարունակ մարդիկ, որպես վառելիք օգտագործում են փայտը: Բուսականու-  
թյունը երկրի վրա զարգանում է արևի ճառագայթային էներգիան կլանելու և այդ  
էներգիան ածխաջրածնային միացությունների քիմիական էներգիայի վերածելու  
ճանապարհով: Այրելով փայտը, մարդն այսպիսով այդ էներգիան վեր է ածւմ  
շերմայինի: Փայտն սև ածխի, նավթի ու հերմաքարերի միջոցով մեզ նորից արհ  
է լուսավորում, որը դարերով նրանց մեջ կուտակել է իր ճառագայթային էներգիան:

Ուրեմն, անհրաժեշտ է դռնել այնպիսի մատչելի ու էժան մի նյութ, որը քի-  
միական օճակցիաների հետևանքով նախ յուրացնի արեգակնային էներգիան, իսկ  
հետագայում, երբ հարկ լինի, ետ վերադարձնի այն: Ըստ որում, ի տարբերություն  
բնական վառելիքների, այդ նյութը պետք է ընդունի իր նախկին տեսքը, որպես  
նորից կուտակի Արևի էներգիան:

Գիտության մեջ սկզբունքորեն այսպիսի նոր ուղղությամբ է հանդես եկել  
աղբերջանցի դիտնական Գ. Գ. Մամեդբեյլին: Այդ ուղղությունը կոչվում է արե-  
գակնային շերմաքիմիա:

Նրա առաջարկի էությունը հետևյալն է: Վերցնենք կրաքարի մի կտոր և տա-  
քացենք կրակի վրա: Սպասենք մինչև սառչի այն և դենք չրով լի ափսի մեջ:  
Մեր աչքի առջև կրաքարի այդ թրծած կտորը «կկենդանանա», կսկսի «շնչել»,  
արձակելով տաք զուրբու շիթեր, կճաքճքի և որոշ ժամանակ անց «կմեռնի»: Վե-  
րածվելով հանդիստ, մածնանման զանգվածի: Ի՞նչ տեղի ունեցավ թրծած կրաքարի  
կտորի հետ, որը շինարարների դիպուկ արտահայտությամբ կոչվում է շհանգած  
կիր:



# ՄԻ ՉԱՐԱՇԱՀԵՐ


կրաքարը կազմված է երեք էլեմենտներից՝ ածխածնից և թթվածնից: Երբ մենք կրաքարն այրում ենք, նրանից ջնդում է զազը, և ստացվում է շահագած կիր: Գ. Գ. Մամեղրեյի նաաշարկում է կրաքարն այրել ոչ թե կրակի վրա, այլ արևի տակ՝ ամռան տապին, օդադործելով արեղակնային ձրի էներգիան: Տաքացման ընթացքում բուռն կերպով անջատվող ածխաթթու զազը կարելի է թափախել և նույն արեղակնային էներգիայի օգնությամբ բայբայել ու վերածել քիմիականի և ածխածնի, որը մտնում է ածխի, նավթի, զազի բաղադրության մեջ և 56,5% է կազմում, օրինակ, այնպիսի Շրաշալի վառելանյութի, ինչպիսին անտրացիտն է:

Բայց սա զեռ բուրբը չէ: Երբ թրծած կրի կտորը մենք դնում ենք ջրի մեջ, այն սկսում է թշշալ, անջատելով մեծ քանակությամբ ջերմություն, և վեր է ածվում այսպես կոչված հանգած կրի: Արեղակնային ջերմաթրմիան առաջարկում է հարկ եղած դեպքում ճիշտ այդ եղանակով ջերմություն ստանալ արևով թրծված կրաքարից:

Հետևաբար, թրծելով կրաքարը ամռանը, մենք նույնիսկ երկար ժամանակից հետո էլ կարող ենք ստանալ ջերմային էներգիա՝ «անզոջնելով» թրծած կրաքարը և օդադործելով ածխածինը որպես վառելանյութ:

Հանգած կրի օպիտակ, ջրիկ զանդվածը կլանելով օդում գտնվող ածխաթթու զազը, սկսում է կարծրանալ և նորից վերածվում է շահագած կրաքարի: Ածխաթթու զազի բանակը օդում աննշան է՝ ոչ ափնի, բան 0,04%, և այդ պրոցեսը բավական զանգաղ է ընթանում: Այսպիսի բնական ճանապարհով վերականգնված կրաքարը կարելի է կրկին օգտագործել արեղակնային էներգիան կուտակելու նպատակով:

Առաջարկված եղանակով ջերմային էներգիա ստանալու վճռական էտապն է՝ մշակել արեղակնային էներգիայի միջոցով ածխածնի անջատման ուղիները սինթա: Այժմ սրա վրա էլ ամենայն հավանականությամբ իրենց շանքերը կկենտրոնացնեն գիտնականները: Բացառված չէ նաև, որ արեղակնային ջերմաթրմիայում կիրառելու համար կդառնան և այլ, ափնի մեծ էֆեկտ տվող նյութեր, բան կրաքարն է:



ցույցը միացնել կինոյից վերագրանալուց հետո: Չէ որ մենք ամեն օր կինո շենք գնում և, առավել ևս, իրար ետևից շենք դիտում երկու-երեք ֆիլմ: Իսկ ինչու՞ պետք է մեզ թույլ տանք մեկուկուս-երկու ժամյա կինոսեսանից հետո նույնքան էլ նստել կապույտ կրանի առաջ: Թեև հետաաատանային հազորգումների ծրագրերը բազմազան են, այնուամենայնիվ օրգանիզմի վրա իրենց ազդեցության և օրգանիզմի կողմից դրանց ընկալման բնույթով բավականին միատեսակ են:

Հետաաատացույցից ի՞նչ հետադրության վրա պետք է նստել: Եթե տեսնում եք պատկերի սողային կառույվածքը, ապա նստեցնեք ափնի հետո: Հիշեցե՛ք՝ չի կարելի կրանին շատ մոտ նստել, զա կարճատեսությամբ է զարգացնում: Այդ նույն պատճառով էլ չի կարելի կրանին նայել խիստ շեղ դիրքից: Լավ է, երբ հետաաատացույցը գտնվում է նստած մարդու աչքերի մակարդակին կամ՝ փոքր-ինչ ցած (հատակից 100—110 սանտիմետր բարձրության վրա):

Շատերի մոտ այն կարծիքն է տիրում, թե հետաաատանային հազորգումները ամենից լավ է դիտել մթության մեջ: Դա ճիշտ չէ: Աչքերը հարմարվում են մթությանը, նրանց զգայունությունը աճում է, և մենք կրանի վրա ափնի շատ մանրամասնություններ ու երանգներ ենք տեսնում, բան լուսավորված սենյակում: Սակայն, հետագայում, սկսում է ուժեղանալ լուսավորված կրանի և շրջապատի մթության տարբերությունը, և աչքերն ափնի արագ են հոգնում: Այդ պատճառով էլ այժմ գերիշխում է այն կարծիքը, որ անհրաժեշտ է կողմնակի փոքր լուսավորություն, այսինքն սեղանի լամպ: Այն պետք է դնել այնպես, որ չխանգարի դիտելուն:

Ցանկալի է, որ երկխոսները հետաաատացույցումները դիտեն շարաթական 2—3 անգամից ոչ ափնի և հետադրորին լավ այն օրերին, երբ նրանք ափնի բիշ են ծանրարևոճված դասնով: